

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ՝ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՑԱՆ

Հայ ժողովրդական երգերի հրատարակման պատմության սկզբնավորման գործում հսկայական դեր ունի Ղևոնդ Ալիշանը: Շատ բարձր գնահատելով ժողովրդական բանավեպը՝ նա միջնադարյան ձեռագիր աղբյուրներից գտնում, առանձնացնում է հայկական ժողովրդական երգեր և 19-րդ դարի 40-ական թվականներից սկսում է հրատարակել դրանք «Բազմավեպի» համարներում: Ավելի ուշ՝ 1852 թ. «Բազմավեպում» հրատարակված և մի շարք դեռ անտիպ երգեր ամբողջացվում են Ղ. Ալիշանի կազմած «*Հայոց երգք ռամկականք*» ժողովածուում, որն ամփոփում էր երգերի հայերեն բնագրերը և դրանց անգլերեն թարգմանությունները: Ինչպես տեղեկանում ենք ժողովածուի անգլերեն նախաբանից, որն ունի «Բրիտանական հանրությանը» խորագիրը, Ալիշանը նպատակ ուներ հայ ժողովրդական երգերը մատուցել եվրոպացի ընթերցողներին. երգային բնագրերի հայերեն տարբերակներից բացի, մնացած ողջ ժողովածուն՝ ծանոթագրություններով հանդերձ, անգլերեն է: Ալիշանը նշում է, որ Արևելքի հնագույն ազգերից մեկը լինելով՝ հայ ժողովուրդը ունեցել է ծաղկուն գրականություն, սակայն երկար ժամանակ բարբարոս ցեղերի ասպատակությունների հետևանքով մեծապես մարել է «Արարատի գավակների բանաստեղծական կրակը»: Եվ այնուամենայնիվ, հեղինակը հույս էր հայտնում, որ ժողովածուն կհետաքրքրի լուսավորված և Հին Արևելքի մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող հանրությանը¹:

Եվ իսկապես, ժողովածուն բավական մեծ ընդունելության է արժանացել ու թարգմանվել է նաև եվրոպական այլ լեզուներով:

Գիտական գրականության մեջ Ալիշանի այս ժողովածուին շատ են անդրադարձել, սակայն թռուցիկ: Այն հիշում են գրեթե բոլոր բանագիտական աշխատություններում, արժևորում՝ որպես հայ բանահյուսության առաջին տպագրված ժողովածու, սակայն հանգամանալից քննություններ չենք գտնում: Պետք է առանձնացնել Ա. Մնացականյանի՝ միջնադարյան ժողովրդական երգերի կապակցությամբ այդ ժողովածուին անդրադարձը², Էդ. Ջրբաշյանի՝ «Նահապետի երգերի» առն-

¹ Տե՛ս Ղ. Ալիշան, *Հայոց երգք ռամկականք*, Վենետիկ, 1852, էջ 2-3:

² Տե՛ս Ա. Մնացականյան, *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր*, Եր., 1956, էջ 12-14:

չությամբ ռամկական երգերի վերաբերյալ արժեքավոր դիտարկումները³ և Ս. Շտիկյանի ուսումնասիրությունը⁴:

Մեր այս ուսումնասիրության մեջ փորձելու ենք պարզել, թե որքանով են ժողովածուի երգերը ժողովրդական, որն էր Ալիշանի մտեցումը ռամկական երգերի տարբերակմանը, ժողովրդական երգային բանահյուսության ինչ նմուշներ է ամփոփում ժողովածուն և այլ հարցեր:

Ռամկական երգերը «Բազմավեպի» էջերում:

Ինչպես նշեցինք, երգերի հրատարակումը Ալիշանը սկսեց «Բազմավեպի» էջերից: Առաջին անգամ ժողովրդական երգ հրատարակվեց հանդեսի 1843 թ. 21-րդ համարում՝ «Ազգային երգերու և ուրիշ աւանդներու վրայ» խորագրով: Ալիշանը առաջիններից էր, որ կարևորեց ժողովրդական բանահյուսությունը. «ՃՇՄԱՐԻՏ ազգասիրի մը առջև շատ հարգի բաներ են նաև ան աւանդները որ բերնէ բերան անցնելով ինչուան իր օրերը հասած են»: Նա բարձր է գնահատում ժողովրդական բանավոր ավանդությունը՝ որպես ազգի պատմությունը, լեզվական փոփոխությունները արտացոլող մի շատ կարևոր աղբյուր և, հիշատակելով մյուս ազգերին, որոնք սկսել են գրառել իրենցում պատմվող ազգային պատմությունները, երգերն ու առակները, երախտագիտությամբ է հիշում Մ. Խորենացուն, որ մեզ է ավանդել ժողովրդական գանձերը ավանդություններն ու երգերը, որոնք ի հայտ են բերում «ազգային ոգին»⁵: Ահա այս կարևորության գիտակցումով՝ Ալիշանը կոչով դիմում է իր ընթերցողներին՝ խնդրելով գրի առնել ժողովրդական «անմեղ խաղեր, երգեր, զանազան պատմություններ ու առակներ»: Կամենալով առաջին օրինակը ցույց տալ՝ Ալիշանը բերում է մի երգ՝ Վանա ծովում խեղդվածի մասին՝ «**Նաւով Աղթամարայ էլանք**» սկսվածքով, և վերլուծում այս բանաստեղծությունը: Այս երգի հրատարակությունը ուներ իր նախապատմությունը: 1843 թ. «**Արշալոյս Արարատեանի**» 151-րդ համարում լույս էր տեսել իտալացի քահանա տեր Հովսեփ Քափելեդիի հոդվածը՝ նվիրված հայ բանաստեղծությանը, ուր հեղինակը գրում է.

«Մուրք Ղազարու վանքը մխիթարեան հայազգի կրոնաւորներուն քով եղած ձեռագիրներուն մէջ զանազան անտիպ բանաստեղծական գրուածներ կան, որոնց հեղինակներուն անունը յայտնի չէ, ու ասոնց ալ ճաշակը տալու համար հոս տեղս կը թարգմանեմ մէկ կտորը, որու անունն է. Վանայ ծովուն մէջ պէկոծութիւն մը»⁶:

³ Տե՛ս **Էդ. Ջորջոյան**, Ղևնդ Ալիշանի «Երգք նահապետի» բանաստեղծական շարքը և նրա գեղարվեստական միասնությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», № 2 (47), Եր., 1982, էջ 22-46:

⁴ Տե՛ս **Ս. Շտիկյան**, Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Եր., 1967, էջ 149-159:

⁵ «Բազմավեպ», 1843, թիվ 21, էջ 332:

⁶ «Արշալոյս Արարատեան», 1843, թիվ 151:

Հեղինակը մեծ ցանկություն է հայտնում այս բանաստեղծությունը «Բազմավեպում» տպված տեսնել, որին էլ արձագանքում Ալիշանը: Դա սկիզբ է դառնում հոդվածաշարի հրատարակման:

«Բազմավեպի» այս հոդվածաշարը հետագա համարներում հրատարակվել է հիմնականում «Ազգային և ռամկական երգեր» խորագրով (տե՛ս, օրինակ, 1845, էջ 251)⁷: Ժողովրդական երգեր են լույս տեսնում «Բազմավեպի» 1843, 1844, 1845, 1847, 1850 թվականների համարներում: Ընդ որում, միշտ չէ, որ ժողովրդական երգերը հրատարակվել են վերոհիշյալ խորագրերի ներքո: Օրինակ՝ «Կռունկ» երգի հանրահայտ տարբերակը «Բազմավեպում» տպագրվել է «Բնական գիտություն. բնական պատմություն» խորագրի ներքո՝ «Կռունկ» ենթավերնագրով հոդվածի վերջում⁸:

«Ռամկական» բնութագրումը և երգերի ժողովրդականության հարցը:

Թե՛ն «Հայոց երգք ռամկականք» ժողովածուն ունի գիտական ծանոթագրություններ, սակայն դրանք հիմնականում անհասկանալի, օտար և բարբառային բառերի բացատրություններ են, ինչպես նաև պատմա-աշխարհագրական տեղեկություններ անձնանունների և տե-

⁷ Այստեղ ուզում ենք երկու անճշտության անդրադառնալ, որ տեղ են գտել Ս. Շտիկյանի ուսումնասիրություններում: Գիտնականը, հանգամանալից քննության ենթարկելով Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունները, «Բազմավեպում» ժողովրդական երգերի տպագրության, վերաբերյալ, ըստ երևույթին թյուրիմացաբար, նշում է 1844-ի նոյեմբեր ամիսը (տե՛ս Ս. Շտիկյան, Ալիշանի գեղարվեստական ժառանգությունը, էջ 149; Ս. Շտիկյան, Ալիշանի անստորագիր գործերը «Բազմավեպի» էջերում // «Պատմա-բանասիրական հանդես», 1978, թիվ 2, էջ 85): Երկրորդ անճշտությունն այն է, որ Շտիկյանը ռամկական երգերի վերանվանված շարունակություն է համարում «Բազմավեպում» Ալիշանի հրատարակած մեկ այլ հոդվածաշար՝ «Քնար հայկական» խորագրով (տե՛ս Ս. Շտիկյան, Ալիշանի անստորագիր գործերը «Բազմավեպի» էջերում, էջ 87): Ըստ երևույթին Շտիկյանին թյուրիմացության մեջ է գցել Ս. Միանսարյանցի նույն վերնագրով հրատարակած ժողովածուն, որում ևս լույս են տեսել ժողովրդական երգեր. և որի վերնագիրը, ինչպես նշում է Շտիկյանը, նույնությամբ վերցված է Ալիշանի այս հոդվածաշարից: Պետք է նկատել, որ «Բազմավեպի» «Քնար հայկական» հոդվածաշարը ամենին էլ ռամկական երգերի վերանվանված շարունակությունը չէ: «Քնար հայկական» հոդվածաշարի առաջին հոդվածն ունի այսպիսի ենթավերնագիր՝ «Ազգահոգի կամ Բնիկ հայկական բանաստեղծությունք», որի ներքո Ալիշանն ինքը մեկնաբանում է այս նոր շարքի տրամաբանությունն ու բովանդակությունը, այստեղ գետեղված և գետեղվելիք բանաստեղծությունների բնույթը: «ԱԶԳԱՅԻՆ և ռամկական երգոց ճաշակներ ընծայելով ատեն ատեն օրագրիս մեջ, իմացանք, որ ինչպես մեզի, այսպես մերազնեայ ազգասիրաց ալ հաճոյ են, և չենք դադրիր երբեմն երբեմն հրատարակել նոյնպիսի երգերը: Բայց կ'ուզենք նաև մեր վսեմ հայկական գրաբար լեզուով գրուած նախնեաց ընտիր բանաստեղծութեան կամ երգոց ճաշակն ալ ընծայել, և կը յուսանք, որ հասկցող սիրտ ու ականջ ունեցողներուն հաճոյ պիտի ըլլան այս գրուածները՝ որ կ'անուանենք՝ Քնար Հայկական...» («Բազմավեպ», 1848, № 6, էջ 88): Ինչպես պարզ է դառնում, «Քնար հայկական» շարքը պետք է ընդգրկեր ոչ թե ժողովրդական, այլ դասական հեղինակների բանաստեղծություններ: Այստեղ Ալիշանը հիշատակում է Շնորհալու, Նարեկացու անունները և հայ դասական քնարերգության մասին ուշագրավ դատողություններ կատարում: Հետևապես, այն չի կարող ժողովրդական երգերի շարքի վերանվանված շարունակությունը լինել:

⁸ Տե՛ս «Բազմավեպ», 1847, էջ 97:

ղանունների վերաբերյալ: Միակ ժլատ տեղեկությունը, որ գտնում ենք ժողովածուի ծանոթագրություններում, այն է, որ երգերը XIV-XIX դարերի ստեղծագործություններ են՝ մեծ մասամբ քաղված Վենետիկի Ս. Ղազարում պահվող ձեռագրերից⁹: Ցավոք, ժողովածուում նշված չեն երգերին վերաբերող բանագիտական բնույթի տեղեկություններ՝ բանասացի, երգի աղբյուրի կամ գրառման վայրի և այլն: Այս հանգամանքը առանձին դեպքերում որոշակիորեն դժվարացնում է տարբերակելու ժողովրդականը և հեղինակայինը, միջնադարյան ու նոր շրջանի երգերը:

Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ «Բազմավեպում» և հետագայում՝ «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում զետեղված երգերը ոչ բոլորն են ժողովրդական: Դրանցում կան նաև հեղինակային ստեղծագործություններ, որոնց կանդրադառնանք ստորև:

Ո՞րն էր Ալիշանի ելակետը: Այն ժամանակ, երբ Ալիշանը սկսեց հրատարակել իր ռամկական երգերը, դեռևս չկար հստակ սկզբունք ժողովրդական նյութը գրականից տարբերակելու, և ինչպես Ալիշանի, այնպես էլ հետագա տարիներին Գամառ Քաթիպայի, Միքայել Միանսարյանցի և այլոց հրատարակած երգարաններում բանահյուսական և գրական երկերը դեռևս լիովին չէին տարանջատվում: Սակայն կարևոր է նաև մեկ այլ հանգամանք. Ալիշանը ռամկական բնութագրիչը գործածում է նաև այն դեպքում, երբ խոսում է հեղինակի՝ ժողովրդական լեզվով և ոճով գրված երկերի մասին:

Այս կապակցությամբ ուշագրավ է Ալիշանի՝ «Բազմավեպում» Նահապետ կեղծանունով հրատարակած բանաստեղծություններին տրված բացատրությունը, ըստ որի՝ Նահապետ անունով այս հորինված բանաստեղծն իբր Շահ Աբասի ժամանակներում է ապրել, որ նախ սկսել է ստեղծագործել «բարձր ու մաքուր ոճով», սակայն հետագայում «գրիչը փոխել է բրիչով» և ստեղծագործել «ռամկական բանաստեղծություններ»: Այս բանաստեղծությունները նա նմանեցնում է Հայաստանում և Երևանում ի հայտ եկած աշուղների ստեղծագործություններին.

«...ինչպես որ կը գրեն մեզի Հայաստանի ու Երևանու կողմերէն, վաթսուն կամ եօթանասուն տարի կայ որ ան կողմերը քանի մը երևելի բանաստեղծներ էլեր են (որ հոն աշրդ կըսուին), բայց ասոնց բանաստեղծութիւնը, բնական տուրք միայն ըլլալով, երգերնին ալ կամ խիստ ռամկական է, և կամ ռամկաց բերանն անցնելով անհասկանալի եղեր է. շատն ալ տաճկի ու պարսկի լեզուով շարադրած է: Այսպիսի բանաստեղծներուն մէջ անուանի են ասոնք. Սայաթնով, Քեշիշ օղլի, Ալահվերդի, Աղբար Աղամ...»¹⁰:

Ինչպես տեսնում ենք, Ալիշանն այստեղ ռամկական է համարում նաև աշուղական՝ անհատների հորինած բանաստեղծությունները, ինչ-

⁹ Տե՛ս **Ղ.Ալիշան**, Հայոց երգք ռամկականք, էջ 83:

¹⁰ «Բազմավեպ», 1847, թիվ 12, էջ 188:

պես նաև Նահապետի՝ աշխարհաբար գրվածքները, որոնք ժողովրդական լեզվով և ոճով են գրված: Էդ. Ջոբաշյանը նկատում է, որ Ալիշանը Նահապետի կերպարը հորինում է՝ տուրք տալով եվրոպական օսիանիզմին¹¹: Ինչպես շոտլանդացի Մաքվերսոնը ստեղծել էր Օսիանին՝ իբրև 3-րդ դարում ապրած ժողովրդական մի բանաստեղծի, որը մեծ ճանաչում գտավ որպես «հյուսիսային Հոմերոս», այնպես էլ Նահապետը, որին Ալիշանն անվանում է հայրենի դաշտերի Հոմերոս կամ Վիրգիլոս, միջոց էր գրականությունը ժողովրդական, բանահյուսական շերտով հարստացնելու, լեզվի ժողովրդականացմանը հասնելու համար:

Այսպիսով տեսնում ենք, որ «ռամկական» բնութագրումը Ալիշանը գործածում է ոչ միայն բուն ժողովրդական, այլև իր և այլ անհատ ստեղծագործողների՝ ժողովրդական ոճով գրվածքները բնութագրելու համար: Հետևապես, պարզ է դառնում նաև, որ նա չպետք է փորձեր հստակորեն տարանջատել բուն ժողովրդական, անհեղինակ և հեղինակային երգերը:

Հարցին քիչ թե շատ ամբողջական անդրադարձել է Ա. Մնացականյանը իր «Հայկական միջնադարյան ժողովրդական երգերի» առաջաբանում: Ըստ Մնացականյանի՝ ժողովածուի 19 երգերից 8-ը հեղինակային են դրանց հեղինակների մի մասին ուսումնասիրողը նշում է (Կ. Երզնկացի, Ստեփանոս Ջուղայեցի և այլք), իսկ որոշ երգեր համարում է անհայտ հեղինակների ստեղծագործություններ: Ըստ նրա՝ ժողովածուի երգերից 11-ն են բուն ժողովրդական, որից 6-ը՝ միջնադարյան, 5-ը՝ 19-րդ դարում գրառված¹²:

Ցավոք, այս սեղմ հատվածում Մնացականյանը մանրամասն չի դիտարկում յուրաքանչյուր երգ, իսկ աշխատանքի ծանոթագրումներում անդրադառնում է միայն նրանց, որոնք համարում է միջնադարյան ժողովրդական: Ըստ Մնացականյանի՝ միջնադարյան ժողովրդական են *«Ի Լեւոն որդի Հեթմոյ Ա»* (*«Աւա՛ղ, ըզԼեւոնն ասեմ»*), *«Յամէն առաւոտ և լոյս»*, *«Պանդուխտ առ կռունկ»* (*«Կռու՛նկ, ուստի՞ կու գաս»*), *«Ողբ կաքաւու»* (*«Նստեալ կայր ու լայր կաքուկն»*), *«Մանուկն ու ջուրն»* (*«Այդ վայրի լեռնէտ ի վայր»*), *«Արջ, աղուես եւ գայլ»* (*«Գայլն ու արջն ու աղուեսուկն»*) բանաստեղծությունները: 19-րդ դարի գրառումներ են *«Երգ հարսին»* (*«Շեմկիկ, մի՛ ժածա»*), *«Երգ հարսանեաց փեսայի»* (*«Օրհնեալ բարերար աստուած»*), *«Երգ կաքաւու»* (*«Արեւ տեպաւ սարին վերէն»*), *«Երգ արագիի»* (*«Արագի լ, բարով եկիր»*), *«Երգ երէխայից»* (*«Լուսացաւ, լուսացաւ»*) ժողովրդական երգերը:

Այս դիտարկումները շատ արժեքավոր են և, սակավ բացառություներով, ընդունելի են նաև այսօր:

Ժողովրդական երգերը «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում:

¹¹ Տե՛ս Էդ. Ջոբաշյան, Ղևոնդ Ալիշանի «Երգք նահապետի» բանաստեղծական շարքը և նրա գեղարվեստական միասնությունը, էջ 30-32:

¹² Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 13:

Ղ. Ալիշանի հրատարակած ժողովրդական երգերը ժանրային հարուստ դրսևորումներ ունեն. կան ծիսական և կենցաղային զանազան երգեր (սգո, հարսանեկան, պանդխտության, մանկական և այլն):

Ժողովածուն բացվում է **«Ի Լեւոն որդի Հեթումյ Ա»** միջնադարյան ժողովրդական վիպերգով, որը հետագայում հայտնի դարձավ այլ տարբերակներով ևս:

Ժողովրդական երգատեսակներից ժողովածուում հատկապես հարուստ է ողբերգի ժանրը: Ընդ որում, ժողովրդական ողբերգերի կողքին կան նաև հեղինակային, գրական ողբեր («Սուգ դստեր մեծի իշխանի» (Ավագյան, XIX դ.), «Ողբ Ջուղայեցվոց» (Ստեփանոս Ջուղայեցի, XVII դ.):

Փոքր-ինչ խնդրահարույց է ժողովածուում տեղ գտած ժողովրդական ողբերգերի հարցը: Մնացականյանի՝ վերը բերված դիտարկումներում հեղինակային են համարվում ևս երեք ողբերգեր: **«Ի նաւակոծյալն ի ծովուն Վանայ»**՝ «Նաւով Աղթամարայ ելանք» սկսվածքով երգն ըստ երևույթին անհատական ողբ է, Ա. Մնացականյանը նշում է որպես XIX դ. և վերագրում Հանէ անունով հեղինակի՝ հիմնվելով վերջին տողերում հիշատակվող անվանման վրա: Նույն կերպ, **«Ողբ սօր ի վաղամեռիկ որդին»** (էջ 30, 31) վերնագրով երկու ստեղծագործությունները Ա. Մնացականյանը համարում է անհայտ հեղինակի միջնադարյան ստեղծագործություններ, սակայն Ե. Հարությունյանը հայկական սգո երգերին նվիրված ուսումնասիրության մեջ վերոհիշյալ երեք երգերն էլ առաձնացնում է որպես ժողովրդական ողբերգեր¹³: Դժվարանում ենք ասել, թե ինչ հիմքով է հարգարժան միջնադարագետը սրանք համարում հեղինակային գործեր, ենթադրաբար՝ ուղղակի տարբերակներ գտած չլինելու պատճառով, քանի որ նա, ցավոք, որևէ դիտարկում չի կատարում հարցի առնչությամբ, սակայն մենք ավելի հակված ենք վերջին տեսակետին. երգերը ժողովրդական են: Ի դեպ, հետաքրքրական է, որ Գամառ Քաթիպայի «Ազգային երգարան հայոց»-ում նույնությամբ վերահրատարակված վերջին երկու երգերի հետ նմանատիպ ևս մի ողբերգ կա՝ **«Ողբ ՚ի վերայ վաղամեռիկ որդոյ»** վերնագրով՝ հյուսվածքով և պատկերային համակարգով շատ նման վերոհիշյալ երկու ողբերգերին¹⁴: Ժողովրդական մտածողության հարազատ դրսևորմամբ, ողբերգերին շատ բնորոշ պատկերների առկայությամբ այս երգերը լիովին համահունչ են հայոց սգերգերի մյուս բնագրերին:

¹³ Երազիկ Հարությունյանը ողբերգերին նվիրված իր ուսումնասիրության մեջ Ալիշանի «Հայոց երգք ուսմկականք» գրքույկում առանձնացնում է մի քանի երգ, այդ թվում և «Ողբ սոր ի վաղամեռիկ որդին» վերնագրով երկու ողբերգը (էջ 30-31), կյանքին հրաժեշտ տալու պահին իմաստասիրական խոհ ներկայացնող «Յամեն առաւօտ և լոյս» երգը, «Ողբ կաքաւո» այլաբանական և «Նաւակոծյալն ի ծովուն Վանայ» մերձավորի անունից հյուսված սգերգերը» (տե՛ս Ե. Հարությունյան, Հայ ժողովրդական սգո երգեր, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», էջ 124):

¹⁴ Տե՛ս Գամառ Քաթիպա, Ազգային երգարան հայոց, Ս.Պետերբուրգ, 1857, «Ողբ սոր ի վաղամեռիկ որդին», էջ 70-71, 86-87, «Ողբ ի վերայ վաղամեռիկ որդոյ», էջ 135:

Ժողովածուում լույս տեսած ժողովրդական ողբերգերից ուշագրավ է նաև «*Ցամեն առաւոտ և լոյս*» սկսվածքով միջնադարյան ժողովրդական ստեղծագործությունը (ավելի վաղ տպագրված «Բազմավեպում», 1845 թ., էջ 251), որը հետագայում բազմաթիվ տարբերակներով հայտնի դարձավ, սխալմամբ վերագրվեց Գրիգորիս Աղթամարցուն, սակայն վերստին հաստատվեց որպես ժողովրդական: Ողբերգի ժանրի մի շատ հետաքրքիր դրսևորում է նաև կաքավի ողբը՝ լայաց երգերի այլաբանական դրսևորումը՝ «*Ողբ կաքաւու*»՝ «Նստեալ կայր ու լար կաքուկն» սկսվածքով երգը՝ միջնադարյան տարբերակով:

«Հայոց երգք ռամկականքում» ուշագրավ շարք են նաև հարսանեկան երգերը, որոնք Ալիշանը ներկայացնում է երկու վերնագրերով՝ բաժանելով հարսին և փեսային նվիրված երգաշարերի հատվածները: «Հարսի երգ» վերնագիրն ամփոփում է հրաժեշտի և բաժանման ծիսական գործողությունների ժամանակ երգվող լացերգերը՝ «*Շեմկիկ, մի՛ ժածա*», «*Ձմերիկ խաբեցին թոփ մը շիշով*» սկսվածքներով, «*Երգ հարսանեաց փեսայի*» ընդհանուր վերնագիրը դարձյալ երգային մի քանի հատված է ընդգրկում՝ թագվորագովքերին շատ բնորոշ «*Օրհնեալ բարերար Աստուած*», «*Մեր թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունաց*», «*Մեր թագուորն էր խաչ...*» սկսվածքներով, և հարսանեկան խնջույքներում շատ սիրված թոնոցի-պար կատակերգը՝ «*Էն դիզան, բէտ բէտ դիզան*»: Այս ծիսերգերը XIX դարի շատ արժեքավոր գրառումներ են, որոնք հետագայում վերատպվել են նաև Գամառ Քաթիպայի և Միքայել Միանսարյանցի երգարաններում և ըստ, էության, հայկական հարսանիքներին ամենաբնորոշ երգերի փունջ են:

Միջնադարյան ժողովրդական երգերից ուշագրավ է նաև «*Մանուկն եւ ջուրն*» սիրերգը, ինչպես նաև «*Արջ, աղւես եւ գայլ*» հյուսվածքը, որը միջնադարյան առակի սյուժեով չափածո երգ է: Վարդան Այգեկցու գրառած առակների մեջ կա համանման սյուժեով մի պատում¹⁵:

«Հայոց երգ ռամկականքի» ամենահայտնի ժողովրդական երգերից մեկը «Կռունկ» պանդխտության երգի տարբերակներից է՝ «*Պանդուխտ առ կռունկ*», որը ժողովածուում լույս տեսնելուց առաջ արդեն տպագրվել էր «Բազմավեպի» 1847 թ. թիվ 6-ում (էջ 97): Ժողովրդական երգերի համեմատաբար նոր գրառումներ էին «*Երգ կաքաւու*» (*Արև տէպաւ սարէն վերէն...*), «*Երգ արագլի*» (*Արագլի, բարով եկիր*) և «*Երգ երեխայից*» (*Լուսացաւ, լուսացաւ*) երգերի բնագրերը, որոնք, ըստ Մնացականյանի, XIX դ. գրառումներ են: Ի դեպ, այս երգերը մեր օրերում էլ շարունակում են սիրված մնալ:

Ալիշանի հրատարակած ժողովրդական երգերի ազդեցությունը հայ գրականության վրա:

Ալիշանի հրատարակած երգերը մեծ ժողովրդականություն են

¹⁵ Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 603:

վայելել և ազդեցություն թողել հայ գրականության վրա: Բավական է հիշել միայն Թումանյանի երկու բանաստեղծությունները, որոնք «Հայոց երգք ռամկականքում» լույս տեսած ժողովրդական երգերի հիմքով են ստեղծվել («Կաքավի գովքը» և «Մանուկն ու ջուրը»)¹⁶: Ուշագրավ է հատկապես վերջին մշակումը, որի ժողովրդական սկզբնաղբյուրը՝ «Մանուկն եւ ջուրն», ամեննին էլ մանկական չէ: Այն ժողովրդական սիրերգ է, որում Թուխ մանուկը, այսինքն՝ պատանին, ջրին հարցում անելով, ի վերջո ուզում է գտնել աղբյուրի ակից ջուր խմած իր սիրելիին.

Ես ի յայն աղբիւրն երթամ,
Որ գայ քո եարն ու ջուր խրմէ,
Դէմ գամ, գդունչն պագնեմ՝
Ապա սիրովըն յագենամ¹⁷:

Թումանյանն իր մշակումից դուրս է թողել երգի վերջին տները և ստացել գոտրիկ մանկական բանաստեղծություն, որտեղ *մանուկ* բառն արդեն գործածված է ոչ թե միջնադարյան *պատանի* իմաստով, այլ բառիմաստի հետագա փոփոխությամբ՝ որպես *մանկիկ, երեխա*, որը գրույցի է բռնվում ջրի հետ մանկանը բնորոշ անմիջական հարցերով: Ուշագրավ է նաև, որ Թումանյանի «Մանուկն ու ջուրը» բանաստեղծությունից դուրս թողնված՝ սիրահարի ու ջրի երկխոսության բանահյուսական մոտիվն ավելի վաղ հայտնվել էր «Անուշ» պոեմում՝ հիմք դառնալով «Ամպի տակից ջուր է գալիս» շատ սիրված հատվածի ստեղծմանը, որն այսօր ժողովրդականացել է և ինքնուրույն կյանք ստացել որպես սիրերգ¹⁸:

Ա՛յ պաղ ջրրեր, գուլալ ջրրեր,
Որ գալիս եք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չուրեր,
Յարս էլ խըմե՞ց էդ ջրրից¹⁹:

Ի տարբերություն նախորդի՝ «Կաքավի գովքը» բանաստեղծությունը մշակելիս Թումանյանը հարազատ է մնացել ժողովրդական բնագրին: Համեմատելու համար բերենք երգի ժողովրդական և թումանյանական տարբերակների առաջին հատվածները:

Արեւ տէպաւ սարին վերէն,
Խօրօտիկ, խօրօտիկ.
Կեաքեաւն էլաւ իր բեռնէն
Բարեւ արեց ծաղկընէրէն,
Թռաւ էկաւ սարին ձերէն.
Խօրօտիկ, խօրօտիկ,

¹⁶ Այս մասին տե՛ս նաև **Ս. Շոիկյան**, Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, էջ 157-159:

¹⁷ **Ղ. Ալիշան**, Հայոց երգք ռամկականք, էջ 62-65:

¹⁸ Այս մասին տե՛ս նաև **Ն.Վարդանյան**, Մի երգի մշակման պատմություն // «Գիտության աշխարհում», գիտահանրամատչելի հանդես, Եր., 2020, № 3, էջ 22-26:

¹⁹ **Հովի. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1989, էջ 86:

Այ սիրուն կեաքեաիկ...
(*Ժողովրդական, «Երգ կարաու»*)²⁰

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն սարի ծերեն,
Բարև բերավ ծաղկըներեն.
Սիրունի կ, սիրունի կ,
Նախշուն կաքավիկ:
(*Թումանյան, «Կաքավի գովքը»*)²¹

«Կաքավի գովքը» այսօր էլ շատ սիրված է և հնչում է բեմերից հենց այս՝ Թումանյանի մշակած բնագրով և Կոմիտասի երաժշտական հիանալի ձևավորմամբ:

Ամփոփում: Այսպիսով, Ղևոնդ Ալիշանը եղավ հայ ժողովրդական երգերի և ընդհանրապես ժողովրդական բանահյուսության առաջին արժևորողներից մեկը: Նրա հրատարակած ռամկական երգերը լայն ճանաչում բերեցին այդ ժամանակաշրջանում դեռևս ըստ արժանվույն չգնահատված ժողովրդական արվեստին, նախադեպ եղան նմանատիպ այլ ժողովածուների հրատարակման գործում, քանիցս թարգմանվեցին և վերահրատարակվեցին: Լինելով առաջինը՝ Ալիշանը՝ որպես բարձրաճաշակ գեղագետ, ընտրեց հայ ժողովրդական երգերի ամենարժանիք նմուշներից, որոնք շարունակում են սիրված մնալ մեր օրերում ևս:

Բանալի բառեր – *Ղևոնդ Ալիշան, ռամկական (ժողովրդական) երգեր, «Բազմավեպ», միջնադարյան երգեր, ողբերգեր, հարսանեկան, պանդխտության, կենցաղային երգեր, գրական մշակումներ*

НВАРД ВАРДАНЯН – Издание Гевондом Алишаном армянских народных песен. – В статье исследуются народные песни, изданные Гевондом Алишаном. Представлена история их публикации на страницах журнала «Базмавеп» в 1843–1850 гг. Подняты вопросы, связанные с основным принципом классификации песен как народных. Несмотря на обозначение, не все песни в сборнике являются народными, среди них есть и литературные, и авторские. Ясно, что, называя песни народными, Алишан ставил во главу угла их язык и стиль. Тот же подход мы обнаруживаем в «Песнях Наапета» – сочинениях, приписанных Алишаном вымышленному сказителю.

В статье тексты, вошедшие в сборник «Армянские народные песни», делятся в зависимости от их характеристики на народные и авторские. Вкратце сказано о влиянии народных песен, изданных Алишаном, на армянскую литературу, в частности на стихи Ованеса Туманяна.

²⁰ Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, էջ 53:

²¹ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., 1988, էջ 214:

Ключевые слова: *Гевонд Алишан, народные песни, «Базмавеп», средневековые песни, песни скорби, свадебные, детские песни, литературные обработки*

NVARD VARDANYAN – *Publication of Armenian Folk Songs by Ghevond Alishan.* – The article examines the folk songs published by Ghevond Alishan. The history of the publication of songs on the pages of "Bazmavep" during 1843-1850 is presented. Various issues related to the basic principle of the classification of songs called "ramkakan", which means folk songs, are being studied. Despite the content, not all the songs in the collection are folk songs, there are also literary songs and author's songs. It is clear that for Alishan, the key was the presence of the nationality of the language and style of songs. We find the same approach in "Songs of Nahapet", a folk singer invented by Alishan.

In the article, an attempt is made to distinguish between folk and author's songs in the collection "Armenian folk songs" by Alishan, the types of folk songs are presented, their further destinies are studied. It briefly talks about the influence of folk songs published in Alishan's collection on Armenian literature, in particular in the poems of Hovhannes Tumanyan.

Key words: *Ghevond Alishan, folk songs, "Bazmavep", medieval songs, songs of sorrow, wedding songs, children's songs, literary adaptations*